ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ը*.**

1) մթ-նկա, գահ-նկեց, այլ-նտրանք, խոչ-նդոտ
2) ան-նկեր, մարտ-նչել, դանդաղ-նթաց, ան-նդունակ
3) հնդկ-նկույզ, երկ-նտրանք, ան-ստգյուտ, ճեպ-նթաց
4) որոտ-նդոստ, ան-նդմեջ, ան-նտել, ակ-նդետ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ*.**

1) ը-բռնել, ա-պամած, թու-բ, գա-փռ
2) ա-փոփել, հա-բավ, ա-բարտավան, ա-բավ
3) ա-բիոն, ա-բոխ, բա-բիռ, ա-բասիր
4) ճա-փա, թ-բլիկ, զա-բիկ, ա-բարբառ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին.**

1) առ(ընթեր), երկ(կողմ), շարվե(շարան), հազիվ(հազ)
2) հետ(այսու), ամսե(ամիս), ըստ(այնմ), ի(սպառ)
3) ափ(հանում), ի(հեճուկս), հյուսիս(արևմտյան), խառն(ի)խուռն
4) ի(մի)բերել, վաթսուն(մեկ), գեր(ծանր), գլուխ(գործոց)

4 **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.**

1) ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ՄԱՍԻՍ, ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ, ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ
2) ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՁՈՐԻ ՄԻՐՈ, ԿԱՊՈՒՏԱՆ ԼԻՃ
3) ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՄԱՆՇ, ՁԵՆՈՎ ՕՀԱՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
4) ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) դրվատել, կշտամբել, պախարակել, դատափետել
2) խանդաղատանք, փաղաքշանք, գորովանք, սեթևեթանք
3) բիրտ, դժնյա, անողոք, անագորույն
4) անշեջ, մշտաբորբ, անմար, անխոտոր

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.**

1) գիտուն–թերուս, նոսր–խիտ, ծածկամիտ–բացբերան
2) բուժիչ–ախտածին, օրհնել–բանադրել, կարծրատիպ–ազատախոհ
3) նշանակալի–չնչին, հիասթափություն–ոգևորություն, խելամիտ–անկշռադատ
4) շնորհաշատ–տաղանդազուրկ, աղմկոտ–հանդարտ, պղծված–սրբագործված

7	**Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:
2) Դժվար էր առանց սարսուռի նայել հողածածկ այդ խուղերի մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
3) Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:
4) Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:

8	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) համահունչ, կապկամարդ, ուսումնատենչ, կայուն
2) նռնականետ, ինքնահավան, շքեղազարդ, վերհուշ
3) խցան, ընդունակ, միջոց, ապերասան
4) մեծահասակ, բացատ, մոխրագույն, մրցավազք

9	**Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-երը* վերջավորությամբ:**

1) գծագիր, առանձնատուն, կաղնեփայտ, շնաձուկ
2) սառցաշերտ, հիմնապատ, մեղրամոմ, դեղաբույս
3) նախագիծ, որսաշուն, պատմագիր, մեծատառ
4) գարեջուր, ակնաբիբ, ընդդիմախոս, որմնասյուն

10	**Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. զույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:
2) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
3) Դասարանների միջև անցկացվող մրցությունն ավարտվեց, և նրանք՝ և՛ պարտված ութերորդցիները, և՛ հաղթած յոթերորդցիները, բարձր աղաղակեցին:
4) Ուսուցչուհին հրահանգեց, որ առաջին շարքը պիտի վազի մինչև աղբյուր, մյուսը՝ սղոցարաններ:

11	**Ո՞ր նախադասության մեջ դերանուն *չկա:***

1) Տեսնելով ախոռապետի լկտիությունը՝ Վասակը՝ իբրև արժանապատիվ հայորդի, ապշում է և մտածում, որ հայերը երբեք նման բան չէին անի:
2) Փայտահատը հետ քաշվեց ու սոսկումով նայում էր, թե ինչպես են վերքից ընկնում կաթիլները՝ մերթ կարմիր արյան նման, մերթ վճիտ արցունքի պես:
3) Օրերից մի օր Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում, որտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:
4) Թագավորը տագնապած ու հուզախռով հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ չընկնեն և սպասեն նոր լուրերի

12	**Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն կա:**

1) Իմ վրայի բծերը ցույց տալուց առաջ մաքրի՛ր ձեռքերդ:
2) Սույնով հայտնում ենք մեր շնորհակալությունը Ձերդ մեծությանը՝ մեր հրավերն ընդունելու համար:
3) Գործարանի ամբողջ բանվորների շրջանում տարածվում էր ըմբոստության ալիքը:
4) Ոչ մեկը չէր հասկանում՝ ինչն էր նրա զայրույթի պատճառը:

13	**Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

1) Նա գլխաբաց էր, երեսը՝ անլվա, աչքերի սպիտակուցները՝ դեղնած, մազերը՝ գզգզված, դեմքը՝ մագաղաթի պես գունատ:
2) Լևոնը փաթաթվեց մոր պարանոցին և սկսեց բարձր ձայնով հեծկլտալ:
3) Զգացի, որ տղան շատ վրդովվեց իմ այդ խոսքից, և փորձեցի մեղմել անհաճո իրավիճակը:
4) Նա վաղուց էր ինձ խոստովանել, թե սիրահարված է այդ աղջկան:

14	**Տրված հատվածներից քանիսո՞ւմ անվանական անդեմ նախադասություն կա:**

- Անուժ ցավի ցուրտ կապար…
  Մահացողի տխուր կյանք.
  Անմխիթա՜ր, անսպա՜ռ
  Վհատության հեկեկանք…
- Լռությո՜ւն, լռությո՜ւն, լռությո՜ւն անսահման:
- Ոսկե տեսիլնե՜ր, անուրջների լո՜ւյս:
- Լինե՜ր հեռու մի անկյուն,
  Լինե՜ր մանկան արդար քուն:

1) մեկում
2) երկուսում
3) երեքում
4) չորսում

15	**Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:**

1) **Տնօրեն** Հակոբյանի և այցելուի միջև սկսվեց մի հետաքրքիր բանավեճ:
2) Փոքրիկն անզգուշորեն կպավ սեղանին և **բաժակը** կոտրեց:
3) Ապրել ազնիվ, աշխատել նվիրումով, օգտակար լինել մարդկանց. **սրանք** էին ավագ ընկերոջս կարգախոսները:
4) Կախարդական մի **շղթա** կա երկնքում
   Աներևույթ, որպես ցավը խոր հոգու:

16	**Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
2) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:
3) Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը բարձր պահեր ազգային արժանապատվությունը:
4) Բայց, անշուշտ, բանը բանից անցել էր:

17	**Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ *չկա:***

1) Իմ աչքերի մեջ այնքա՜ն կրակներ եմ մարել ես:
2) Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր:
3) Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել:
4) Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի:

18 **Ո՞ր նախադասության մեջ բայական անդամի լրացում *չկա:***

1) Ժամանակները խառն են ու խրթին. ուժգին հողմը ննջում է, մեղմ հովը՝ ըմբոստանում:
2) Գետի վշշոցը ներքևում դառնում է շառաչ:
3) Հավքերն աղոթք են անում քնելուց առաջ:
4) Որտե՞ղ են ննջում իմ վաղնջական առավոտները:

19 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1) **Կամրջի վրայով անցնելիս** աջ ու ձախ չէր նայում:
2) Անհրաժեշտ էր **մի քանի օրով գյուղ գնալ:**
3) Բայց այգեպանը չդադարեց **այգին մշակել:**
4) Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և **առանց շրջվելու** հեռացավ քաղաքից:

20 **Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Այս հարցը կարող է անհեթեթ ու տաղտկալի թվալ կամ էլ ապշեցնել ու հանկարծակիի բերել չէ որ միշտ մեր մոլորակի մի կողմում ցերեկ է մյուս կողմում գիշեր:
2) Հենց որ դասագրքերը բաժանեցին ուսուցչուհին նա մի նիհար սուր քթով օրիորդ էր պատվիրեց բացել ութսունիններորդ էջը:
3) Մյուս դանդաղաշարժը ամրակուռ կրիան փոքր-ինչ գերազանցում է խխունջին նա ունի յոթ մետր-ժամ արագություն:
4) Նա փղձկաց վաղուց կարիք էր զգում ազատվելու հոգեկան ծանր բեռից:

21 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հնչյունական ամենահին գիրը սեպագիրն է: Այժմ, երբ սովորում ենք հին սեպագրերը կարդալ, իմանում ենք նաև այն լեզվի բառերը, որով գրված են տվյալ սեպագրերը: Այս գիրը կոչվում է սեպագիր, քանի որ կազմված է սեպաձև նշաններից: Կան երեք տեսակի սեպագրեր՝ վանկագրեր, գաղափարագրեր, ինչպես և որոշիչներ, որոնք ցույց են տալիս տվյալ սեպագրի ինչ լինելը՝ երկիր, քաղաք, գետ և այլն:
2. Պատկերագրերն ու գաղափարագրերը հնչյունական գիր չէին, այսինքն՝ որևէ լեզվի բառեր չէին արտահայտում: Մենք կարող ենք սովորել այդ գրերը կարդալ, բայց չիմանալ, թե ինչպես են հնչել այդ գրերով նշանակված բառերը:
3. Պատկերագրերից հետո մարդիկ անցան գաղափարագրերին: Գաղափարագիրն արդեն մի քայլ առաջ էր պատկերագրից: Նրա նշանները նույնպես պատկերներ էին, բայց գաղափարագրերի տվյալ պատկերը կարող էր ունենալ մի քանի նշանակություն:
4. Գրերի շատ տեսակներ կան: Ամենահին տեսակը պատկերագիրն է: Մարդիկ ժայռի կամ քարի վրա նկարում էին որևէ կենդանի առարկա հենց այդ կենդանու կամ առարկայի իմաստով: Օրինակ, նկարում էին այծ, որը հենց այծ էլ նշանակում էր:

1) 4, 3, 2, 1
2) 2, 1, 4, 3
3) 4, 1, 3, 2
4) 2, 1, 3, 4

22 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա»:

1) «Վերք Հայաստանի», Խաչատուր Աբովյան
2) «Սամվել», Ռաֆֆի
3) «Վարդանանք», Դերենիկ Դեմիրճյան
4) «Հայոց պատմություն», Մովսես Խորենացի

23 **Ո՞ր հատվածն է Նահապետ Քուչակի «Ես աչք ու դու լոյս, հոգի՛» հայրենից:**

1) Ապա յիմ սրտէս ի դուրս՝
   յերկըրէ յերկիր թափեցաւ…
2) Երբ զիս ի քենէ զատեն,
   քան զմեռնելն այլ ճար չի լինի:
3) Երեկ ցորեկով բարով
   տանեին մէկ եար մի ճորով…
4) Մընիկ իմ եարին արէք,
   զինչ հագեր՝ ամէնն է կանանչ…

24 **Նշված հարցադրումներից ո՞րը *չկա* Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում»:**

1) նկարագրել ժողովրդի կյանքն ու նվիրական զգացմունքները՝ սերը, բարեկամությունը, ծնողասիրությունը
2) ներկայացնել կրոնի երկրորդական դերը հայ ժողովրդի գոյության հարցում
3) կենդանություն տալ անձնազոհ հայորդիների գործերին
4) արթնացնել հայոց ազգային արժանապատվության զգացումը

25 **Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է պատկերվում Սամվելի և նրա սիրած աղջկա՝ Աշխենի հանդիպումը:**

1) «Տարոնի առավոտը»
2) «Կնոջ խորհուրդը»
3) «Արաքսի որոգայթները»
4) «Արտասուքի աղբյուրը»

26 **Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ո՞ր հերոսի ուխտն է.**

«Ես չեմ վերադառնա իմ ընտանյաց գիրկը այնքան ժամանակ, քանի դեռ վերջին հագարացին հալածված չէ հայրենիքի սահմաններից»:

1) Աշոտ Երկաթի
2) Գևորգ Մարզպետունու
3) Վահրամ սեպուհի
4) Ցլիկ Ամրամի

27 **Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի ո՞ր կերպարի մասին է հետևյալ հեղինակային խոսքը.**

«Նա կանգնած էր երկու մարդու միջև՝ մեկը՝ միլիոնների ժառանգը, մյուսը՝ այն աղքատ երիտասարդը, որ իր ընտանիքը պահում էր մասնավոր դասերով»:

1) Միքայելի
2) Մարութխանյանի
3) Սմբատի
4) Արշակի

28 **Դանիել Վարուժանի ո՞ր բանաստեղծություններից են տրված հատվածները:**

ա. Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի.
-Ձեզի ընծա՜, հայ մարտիկներ-
Գրիչս եղավ անթրոց սրրտերու հնոցի…
- Ձեզի ընծա՜, քաջ մարտիկներ…

բ. Գյուղակներեն հորիզոնները մինչև
Կը տարածվի մեր մայրությունը հողի.
Գարունն եկա՜վ, չի բավեր ձյունը թեթև
Ա՛լ ծածկելու մեր մերկությունը հղի:

գ. Ցորեն, կակաչ, կարոտով,
-Կաքավը կու լա,
Կապեցի մեկ նարոտով,
-Ձեռքերն են հինա:

դ. Հովե՜ր կ’անցնին.
Ա՛յնքան կ’հորդի, կը կատղի դաշտը հուռթի,
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:
Գոգին մեջեն ալեծածան հովիտին
Ծովե՜ր կանցնին:

1. «Հունձք կը ժողվեմ…»
2. «Ձոն»
3. «Ցորյանի ծովեր»
4. «Արտերուն հրավերը»

1) ա- 2, բ- 3, գ- 4, դ-1
2) ա- 1, բ- 3, գ- 4, դ-1
3) ա- 2, բ- 4, գ- 1, դ-3
4) ա- 3, բ- 2, գ- 1, դ-4

29 **Հատվածներից ո՞րը Վահան Տերյանի բանաստեղծություններից *չէ:***

1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց.
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին…
2) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
3) Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երազի…
4) Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կրմնա հավետ:

30 **Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
2) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛ղշ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
3) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին…
4) Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,
Անծիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:

31 **Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության ո՞ր բառն է բաց թողած:**

Դեպի երկի՞նք պիտի գնամ, դեպի եզերքը …….. –
Իմ բա՞ռձր, հին ու աստղային երազների ճանապարհով…

1) Ամեհի
2) Ամենտի
3) Բարձունքի
4) Անհունի

32 **Ո՞ր բառը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոցն էր յուղում իր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ …… :

1) տառապանքին
2) հառաչանքին
3) արձագանքին
4) չարչարանքին

33 **Բառերից քանիսո՞ւմ *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

ընկնել, ընչացք, ընչաքաղց, ընդունակ, ընձուղտ, ընկեր:

34 **Տրվածներից քանի՞սը ունեն իրենց համանունը.**

մկան, թոռ, կար, ջոկ, ստեր, դանակ, դաս, երգ, երգեր, պատի:

35 **Տրվածներից քանի՞սն են սահմանական եղանակի ժամանակաձևեր.**

ասում են, դառնալու է, մոտեցան, վերցրի, գիտեին, հանգստանայիր, սառչեմ, կզարմանայի, չփոշմանեցի, չխաղաս, չես նեղանա, չի պատասխանելու:

36 **Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ ժամանակաձևեր.**

ցավ զգաց, երգչուհի պիտի դառնամ, մի՛ վհատվիր, չի հավատա, չպետք է ներես, երես մի՛ տուր, պետք է գնամ, տարավ-բերեց, ցավ կապրեմ, հարց չեմ տա:

37 **Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:**

Երեկոն թանձրանում էր Ավարայրի դաշտավայրում: Պարսից զորքը սկսեց գունդ առ գունդ առաջանալ դեպի գետի եզերքը: Հայկական զորաբանակը նույնպես սկսեց տեղաշարժվել, մեջընդմեջ դասավորվել՝ խիտ շարքեր կազմելով: Վարդանը երկար խորհում էր և խորհրդակցում՝ ում նշանակի որպես զորագլուխ:

38 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Մենք եղեգների մեջ թաքնված՝ հետևում էինք այդ թռչունների խելացի որսին:
- Բայց որքան հեռանում էր, այնքան ավելի էր զգում ինչ–որ մեկի անհանգստություն պատճառող ներկայությունը:
- Եթե հնարավոր լիներ այդ րոպեին գնալ որևէ տեղ և թեկուզ ամբողջ կյանքում բոլորովին մենակ մնար, ապա նա դա կհամարեր երջանիկ ապաշխարություն:
- Բայց վերջում հանկարծ անհանգստացավ, ու խղճի՝ մի պահ քնած խայթը նորից արթնացավ:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. դիտողություն, 2. գործնական, 3. պիտանի, 4. հանդիսատես, 5. բարեկամական, 6. հետաքրքրություն, 7. ընթացիկ, 8. արդյունավետ, 9. ուսանողական:

40 **Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1. ադամանդ, 2. նռնենի, 3. որևէ, 4. հորդաբուխ, 5. լուսավառ, 6. ահեղ, 7. մահակ, 8. տարբեր, 9. հյուլե:

41 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ** ***չկա:***

Բաքու գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս. որքա՜ն փոխվել էր նա. զզզված մորուքը ճերմակել էր բամբակի պես, արագաշարժ ոտքերը թուլացել էին, վառվռուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես:

1. **գալով** - անկանոն բայ, անորոշ դերբայ, **մի** - անորոշ դերանուն
2. **թուլացել էին - ե** խոնարհման բաղադրյալ բայաձև, վաղակատար անցյալ, **որքա՜ն** - հարցական դերանուն
3. **զզզված** – հարակատար դերբայ, չեզոք սեռ, **պես** – կապ, հետադրություն
4. **արագաշարժ** – մակբայ, **մարել էին** - դիմավոր բայ, սահմանական եղանակ
5. **վառվռուն** –ածական, **մեռած** – **ե** խոնարհման բայ, չեզոք սեռ

42 **Նշել պարզ նախադասությունների համարները:**

1. Թագավորն ընկավ մտածմունքների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին:
2. Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անծանոթ իշխանուհուն:
3. Արշակը շփոթված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու և ամեն տեղ հասցնելու մասին:
4. Չանցած մի քանի վայրկյան՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ձգված կանգնելով բոլորի առջև:
5. Հայ ժողովուրդը՝ անզեն, սակավաթիվ, անպաշտպան, սարսափի ու անորոշության մեջ էր:
6. Բայց այդ առյուծը իր ծերուկ ծնողի առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղի աղջիկների դիմաց շիկնում է ամոթխած:

43 **Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.**

1. համեմատություն, 2. չափազանցություն, 3. փոխաբերություն, 4. անձնավորում, 5. հանգավորում:

Իմ թախիծն էլ այն ամպի պես
Ցնորում է քնքշաբար,
Բոցավառվում՝ հիշելով քեզ
Եվ արտասվում քեզ համար:

44 **Նշել այն համարները, որոնցում նշված են հատվածներ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքից:**

1. Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին...
2. Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում:
3. Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին:
4. Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը , որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մեկն էր, բոլորից ջոկվեց և իմ աչքում դարձավ այն կետը, որի շուրջ պտտվում էր իմ ներքին աշխարհը:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հայերենը ունի տասը խոսքի մաս, որոնցից նյութական իմաստ են արտահայտում միայն գոյականը, ածականը, թվականը, դերանունը և բայը:
2. Կապերը և շաղկապները արտահայտում են հարաբերություններ, և դրանց մեծ մասը նախադասության անդամ չի դառնում:
3. Եղանակավորող բառերը (վերաբերականներ) արտահայտում են դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական:
4. Հայերենում դեմքի կարգը բնորոշ է բայերին և դերանուններին, իսկ եղանակի կարգը՝ եղանակավորող բառերին և բայերին:
5. Կան բառեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը նախադասությունից դուրս որոշելն անհնար է:
6. Գոյականը, ածականը, թվականը կարող են կիրառվել փոխանվանաբար:

Բ մակարդակ

46 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը սխալ նշված.**

1) ԼԴ - 34
2) ՄՀՋ - 276
3) ՍԹ - 2009
4) ԱԸԴ - 184

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.**

1) գրքասեր, ոտնահարել, զվարճանալ, ձեռնբաց
2) չնչին, հակադրվել, կրթություն, կրնկակոխ
3) կռփամարտ, դասընկեր, գրախոս, գրավ
4) գռեհիկ, անմխիթար, անշրջահայաց, անմատչելի

48 **Տրված բառերից քանիսո՞ւմ մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

մրցակցություն, հրակայուն, կարծրանալ, շրթներկ, ծնրադրել, շրջադարձ, մտացրիվ, վշտաբեկ, սնամեջ, բռնակցում:

1) չորսում
2) երեքում
3) երկուսում
4) հինգում

49 **Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.**

մեղադրյալ, երկչոտ, կթղա, բուրյան, ապակե, բագին, եղնիկ, վեհերոտ, անդրավարտիք, գավաթ, եկեղեցի, տաբատ:

1) մեկ
2) երկու
3) երեք
4) չորս

50 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառակապակցություններն են դարձվածքներ:**

1) տունը քանդել, կարապի երգ, կատվի դրախտ
2) ձեռնոց նետել, երկու ոտքով կաղալ, սպիտակ ջարդ
3) երկու տիրոջ ծառա, գլուխը յուղել, սառույցը շարժվել
4) սպիտակ ագռավ, սև կաչաղակ, ծեր աղվես

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) շաքար, նշխար, կթան, ամբարտակ
2) գողոն, գուշակ, եղունգ, նաժիշտ
3) կաղամբ, ընկույզ, բազում, սնոտի
4) բոժոժ, հելլեն, հրաման, երաշտ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:**

1) գյուղթղթակից, մուլտֆիլմ, բնակվարձ, ֆիզմաթ
2) ջրմուղ, սոցիարցում, խնայդրամարկղ, ուսմասվար
3) դրկից, պետապահովագրություն, Եվրախորհուրդ, ԿԲ
4) շինաղբ, մարզկենտրոն, բուժքույր, գաղթօջախ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում միայն *ի* հոլովման:**

1) լույս, կաղնի, մանուկ, տարի
2) ձի, մրրիկ, եզ, քաղաք
3) գնչու, ավերում, շաբաթ, ծագում
4) փոթորիկ, առու, վայրկյան, սարդ

54 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

1) Սրբազա՛ն, թող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի ղողանջը:
2) Սակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարգևված քեզնից համառ թշվառիս, Քո աղերսով քեզ պիտի պաղատեմ…
3) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:
4) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:

55 **Ո՞ր նախադասության մեջ ժխտական դերբայ (ձևաբայ) կա:**

1) Երբ անտեղի հարց չեն տալիս, սուտ պատասխան չեն ստանում:
2) Չէր անցնում այդ փողոցով, որ պատահաբար չհանդիպի Աստղիկին:
3) Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
4) Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս:

56 ***Հեռու*** **բառը ո՞ր նախադասության մեջ մակբայ *չէ:***

1) Թե ինչպես հանկարծ նա գնաց հեռու,
Էլ չի՞ դառնալու, էլ չի՞ դառնալու:
2) Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն:
3) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,
Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:
4) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ. աչքս է հեռուն:

57 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Կովկասի հայ բնակչության բոլոր խավերում ծայր առավ մի ծավալուն խանդավառություն:

1. բնակչության (ա. ենթակա, բ. հատկացուցիչ, գ. որոշիչ)
2. բոլոր (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. չափի պարագա)
3. ծայր առավ (ա. բաղադրյալ ստորոգյալ, բ. պարզ ստորոգյալ, գ. ստորոգելի)
4. խանդավառություն (ա. ուղիղ խնդիր, բ. հանգման խնդիր, գ. ենթակա)

1) 1–գ, 2–գ, 3–բ, 4–գ
2) 1–բ, 2–ա, 3–բ, 4–գ
3) 1–բ, 2–բ, 3–ա, 4–ա
4) 1–ա, 2–ա, 3–ա, 4–բ

58 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Դու այնպես ես խոսում, կարծես քեզ ոչինչ չի հետաքրքրում:
2. Ես լուռ հետևում էի, թե ինչպես էր նա հեռանում ինձանից:
3. Պարզ երևում էր, որ բոլորը նրանից դժգոհ էին:
4. Ինչու էր նա այդքան զայրացած՝ ես այդպես էլ չհասկացա:

ա. ձևի պարագա
բ. ուղիղ խնդիր
գ. հանգման խնդիր
դ. ենթակա
ե. պատճառի պարագա

1) 1–բ, 2–ա, 3–գ, 4–դ
2) 1–ա, 2–գ, 3–բ, 4–ե
3) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ
4) 1–ա, 2–գ, 3–բ, 4–դ

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Մենք ապրում ենք Գորիսի մեր խրճիթում, որ հայրս էր մի երկու տարի առաջ կառուցել:*
Մենք ապրում ենք մի երկու տարի առաջ հորս կառուցած Գորիսի մեր խրճիթում:
2) *Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը, որը ասք է մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին:*
Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը՝ մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին ասքը:
3) *Մեր քաղաքի մարդիկ, որոնք տակավին չեն մոռացել հողագործությունը, մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:*
Մեր քաղաքի՝ հողագործությունը տակավին չմոռացած մարդիկ մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:
4) *Ինչ որ կատարվեց տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում, անհնար էր նկարագրել:*
Տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում կատարվածը անհնար էր նկարագրել:

60 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Որքա՜ն լավ է մարդկանց՝ քեզ լիովին վստահելը:*
Որքա՜ն լավ է, երբ մարդիկ քեզ լիովին վստահում են:
2) *Թատրոնը չափից ավելի շատ սիրողը ի վերջո խեղդում է իր սիրելիին:*
Նա, ով չափից ավելի շատ է սիրում թատրոնը, ի վերջո խեղդում է իր սիրելիին:
3) *Հրատապ խնդիր է երկու թունելախորշերի միանալը ճիշտ ժամկետում:*
Հրատապ խնդիրն այն է, որ երկու թունելախորշերը միանան ճիշտ ժամկետում:
4) *Նրան հայտնի էր իր հին ընկերների՝ իրեն ստորաբար խաբելը:*
Նրան հայտնի էր, որ իր հին ընկերներն իրեն ստորաբար խաբել են:

61 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուք պիտի դրվի:**

Մելանագույն թեթև թիկնոցի մեջ պարուրված (1) աստվածային կեցվածքով (2) կանգնած էր Համլետը բեմի ճախակողմյան հատվածում (3) աչքերում արցունքի երկու խոշոր կաթիլ (4) որոնց դիպչելով (5) էլեկտրական լույսի շողերը բեկվում լցվում էին դահլիճ (6) ցրելով մութը: Հետո երբ բեմում եղած մարդիկ հեռացան (7) նա մոտենալով իր նման սևազգեստ մեկին (8) շշնջաց վերջինիս ականջն ի վար Մարդ էր Հորացիո...

1) 1, 2, 3, 8
2) 1, 3, 5, 6
3) 2, 3, 5, 7
4) 2, 4, 5, 8

62 **Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

1.«Արդարև, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզ պես պատվական ազգայինի մը… Հայրենասեր անձ մը… Ազգասեր, ուսյալ, կրթյալ… Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկ մը իր մեջ ունենալու համար»:
2. «Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կկարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ’է և ուսումնական է….»:
3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ…»:
4. «Ատ չըլլար. միայն իրենց մորը արգանդին մեջ գտնվողները չունին իրենց պատկերը. եթե անոր ալ դյուրին մեկ ճամփան գտնեն, անոնց ալ պիտի հանեն»:

ա. խմբագիր

բ. բանաստեղծ

գ. Մանուկ աղա

դ. Աբիսողոմ աղա

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

63 **Տրված հատվածներից ո՞րը որ ստեղծագործությունից է:**

1. – «Վարձա՛ կն ահա, տեղ բացեք,
   վարձա՛կը, վարդ տեղացեք.
   Մազերուն մեջ, ոտքին տակ
   մարգարիտնե՛ր լեցուցեք»:
2. Ես ուզեցի լուռ մենանալ,
   Սիրել փըթիթք, խորշեր թավուտ,
   Սիրել կայծերն երկնի կապուտ,
   Առտըվան շաղն, իրիկվան բալ,
   Ճակատագրիս սև գիծ կարդալ,
   Խոկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ:
3. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
   Եվ համրագին գիրքը ձեռքես կ՛ իյնա վար.
   Երազներու պերճուհին է որ կ՛անցնի,
   Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար:
4. Կ՛ըլլան մարդիկ, որ լացող մը չ՛ունին,
   Անոր համար Նա դըրավ այդ լուսին.
   Եվ մահամերձն ալ կ՛ուզե երկու բան,
   Նախ՝ կյա՜նքը, վերջը՝ լացող մ՚իր վըրան:

ա. «Վայրկյան» (Մ. Մեծարենց)

բ. «Հարճը» (Դ. Վարուժան)

գ. «Տրտունջք» (Պ. Դուրյան)

դ. «Սիրել» (Պ. Դուրյան)

1) 1-գ, 2- ա, 3-դ, 4-բ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4- գ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

64 **Բառերից քանիսո՞ւմ հնչյունափոխություն կա.**

ալյակ, ուխտադրուժ, պատանյակ, ազնվական, լուսաբաց, աղեխարշ, պետականություն, թթվահամ, երգչախումբ, նստակյաց, անբասիր, հնչեղ:

65 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

շավիղ, կերուխում, պատրվակ, օճորք, առիթ, խրախճանք, զոջում, ձեղուն, քեֆ, արահետ, առաստաղ, կածան:

66 **Քանի՞ անկախ դերբայ կա տրված հատվածում:**

Տեղ է հասել ու տեսել, որ կնոջ ներկայությունը տղաներին ոգևորել է, նրանց թմրած ջղերը կենդանացրել, և յուրաքանչյուրը կարծում է՝ նրա ուզածն ինքն է: Եկել են խանութ՝ առևտուր անելու, գիտեն՝ ինչ են առնելու և ինչքան: Խանութին մոտենալիս պառավներից մեկը, ճանաչելով մեզանից սերվածին, փորձել է խոսքի բռնվել, բայց հանդիպել է նրա խայթող հայացքին ու հետ կանգնել իր մտադրությունից:

67 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:**

1. Նրանք հավաքվեցին խարույկի շուրջը, հենց կրակի բոցերը մի փոքր մեղմացան:
2. Երբ հասան լեռնաշղթայի փեշերին, երեխաները ցրվեցին տարբեր կողմեր:
3. Թեպետ Մարատը գործը կատարում էր անթերի ու արագ, տնօրենը դարձյալ դժգոհում էր:
4. Բոլորը հասկացան՝ հենց Արամայիսը խանգարեց գործի կարգավորմանը

68 **Նշել այն շարքերի համարները, որոնցում ճիշտ համապատասխանեցված տրված բառերի արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակները:**

1. սկլերոզ – կարծրախտ
2. դեմագոգ – համայնավար
3. կոմունիստ – ամբոխավար
4. սուբյեկտիվ – առարկայական
5. ռեալիզմ – իրապաշտություն
6. օբյեկտիվ– ենթակայական

69 **Նշել հատվածների ճիշտ հաջորդականությունը:**

1. Ըշտապելուց թև են առել,
   Դարձել թեթև թիթեռներ..
2. Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
   Որտեղ լույս է հենց վառվում...
3. Ասում են, թե՝ էն Փարվանա
   Ջահիլներն են սիրավառ...
4. Ու տակավին հուր տեսնելիս
   Մեջն են ընկնում անհամբեր...
5. Ասում են՝ էն թիթեռները,
   Որ գիշերվա խավարում...
6. Հավաքվում են, շուրջը պատում,
   Մեջն են ընկնում խելագար...

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել որոշչի պաշտոն:
2. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել ժամանակի պարագայի պաշտոն:
3. Անորոշ դերբայը կարող է հանդես գալ բաղադրյալ ստորոգյալի կազմում:
4. Անորոշ դերբայը կարող է կատարել որոշչի և հատկացուցչի պաշտոններ:
5. Անորոշ դերբայը գործիական հոլովով կարող է դառնալ ձևի, ժամանակի և տեղի պարագա:
6. Հարակատար դերբայը կարող է կատարել ձևի պարագայի, ժամանակի պարագայի, որոշչի պաշտոններ: